

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝
Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական
ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության գլխավոր մասնագետ (30-2.3-194)

Վարչության գլխավոր մասնագետը՝

- 1) իրականացնում է միջազգային զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները.
- 2) իրականացնում է միջազգային զարգացման ծրագրերի շրջանակներում տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.
- 3) իրականացնում է նոր ծրագրերի նախագծման ու սկզբնավորման աշխատանքները (տրամաբանական հենքի, ցուցանիշների մշակում և այլն),
- 4) իրականացնում է համապատասխան մեթոդաբանություն և պլան՝ մոնիթորինգ, ինչպես նաև ազդեցության գնահատում՝ ներառյալ ֆինանսական վերլուծությունների, տվյալների հավաքագրում:
- 5) իրականացնում է արդյունքների և ազդեցության ցուցանիշների նկատմամբ միջազգային զարգացման ծրագրի առաջընթացի որակական գնահատումը.
- 6) իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) ունի բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

2) ՀՀ Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքների ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 742-Լ որոշման, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2010

թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձը՝ 212,309 (երկու հարյուր փասներկու հազար երեք հարյուր իննը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար քաղաքացիները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
 - անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
 - կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:
- ՀՀ քաղաքացի փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:
- Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 30.05.2019թ.